ԱՎԱԶԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՍՏԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

Խաչիբաբյան Ս.Ս. (ԵՊՀ, Երևան, Հայաստան)
sosekhachibabyan@gmail.com

Սույն հոդվածը նվիրված է արվեստի ժամանակակից ուղղություններից մեկի՝ ավազանկարչության էության, առանձնահատկությունների վերլուծությանը: Փորձ է արված ներկայացնել նկարչական այս մեթոդը նորովի՝ որպես հոգեբանական աշխատանքի մեթոդ՝ ընդգծելով անձի, մասնավորապես նրա ստեղծարարության զարգացման վրա ունեցած ազդեցության տեսանկյունից:

Աշխատանքի շրջանակներում անդրադարձ է կատարվել ստեղծարարության՝ որպես անձնային առանձնահատկության վերլուծությանը գլխավորապես հումանիստական հոգեբանության տեսանկյունից, ինչպես նաև տարիքային որոշակի փուլում ստեղծարարության հնարավոր անկման և այդ անկումը կանխելու ուղղությամբ ավազանկարչության դերը:

Հանգուցային բառեր՝ ստեղծարարություն, ստեղծագործություն, զարգացում, ավազանկարչություն, կրտսեր դպրոցական տարիք:

Ներկայիս՝ տեխնիկական հագեցվածությամբ դարաշրջանի մարտահրավերներով պայմանավորված՝ օրեցօր մեծանում է յուրահատուկ, ստեղծագործ մտածելակերպով մարդկանց պահանջարկը: Հասարակական-մշակութային և գիտատեխնիկական կյանքի շատ ոլորտներում աշխատանքի մի ստվար հատվածի մեքենայացման հետևանքով մարդկային ներուժը ժամանակի ընթացում առավել կենտրոնանում է ստեղծագործական մոտեցում պահանջող գործառույթներում: Ուստի հոգեբանական գիտության մեջ ավելի ու ավելի արդիական և առաջնային է դառնում ստեղծարար անձի, ստեղծարարության՝ որպես հոգեբանական երևույթի, և դրա զարգացման ուղիների ուսումնասիրությունը:

Կյանքի տարաբնույթ խնդիրներին ստեղծագործաբար մոտենալը առաջնային է դառնում ոչ միայն հասարակության, այլև անձի համար, քանի որ հաճախ միայն ստեղծագործական մոտեցում ցուցաբերելով է հնարավոր լինում հարմարվել վիթխարի արագությամբ զարգացող աշխարհում:

Սույն հոդվածում փորձ է արված վերլուծելու ստեղծարարության էությունը գլխավորապես հումանիստական հոգեբանության համատեքստում, դրա զարգացման արդիականությունը կրտսեր դպրոցական տարիքում, ինչպես նաև ստեղծարարությունն ապահովող որակների խթանման ուղղությամբ արվեստի բավականին նոր ուղղության՝ ավազանկարչության դերը:

Առաջին անգամ «ստեղծարարություն» (կրեատիվություն (լատ.՝ creatio- ստեղծել, արարել բառից)) տերմինը օգտագործել է 1922 թ. Դ. Սիմփսոնը: Ընդհանուր առմամբ ստեղծարարություն ընդունված է անվանել անձի՝ անսովոր մտքեր, գաղափարներ, յուրատիպ լուծումներ գտնելու, մտածողության ավանդական սխեմաներից շեղվելու ունակությունը [2; էջ 157-160]:

Գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ հոգեբանության զարգացման վաղ փուլերում ստեղծագործելու ունակությունը վերագրվում էր «հատուկ» մարդկանց՝ «արարողների», «ստեղծագործական անձանց»: Այժմ, երբ հոգեբանական գիտությունը անհամեմատ առաջ է գնացել, այլևս խոսվում է այն մասին, որ մանկության շրջանում հզոր

ստեղծագործական ներուժ ունեն բոլոր մարդիկ, միայն թե բոլորին չէ, որ հաջողվում է պահպանել կամ զարգացնել այն:

Մեր աշխատանքի շրջանակներում մենք հիմնվել ենք ստեղծարարության հասկացման հումանիստական մոտեցման վրա՝ ընդունելով անձի ստեղծարարությունը՝ որպես կենսական դիրքորոշում, կյանքի ոճ, որը չի սահմանափակվում արվեստի կամ գիտության ինչ-որ ճյուղերում հաջողություններով և առավել ևս չի պարտադրում օժտվածության կամ ինտելեկտուալ ընդունակությունների արտահայտվածության բարձր մակարդակ:

Հարկ է նշել, որ ստեղծարար անձի հոգեբանական դիմանկարը կազմելն այնքան էլ դյուրին չէ, քանի որ նմանատիպ փորձերը հանգեցնում են հաճախ իրար հակասող հատկությունների առանձնացմանը: Համադրելով տարբեր ուսումնասիրություններ, ստանում ենք ստեղծագործական անձի անձնային գծերի բավականին երկար շարք. ճկունություն, համառություն, ինտուիցիա, անձնային աճի ձգտում, զարմանալու ընդունակություն, ինքնաբուխություն, անմիջականություն, յուրահատկություն, ընկալունակություն, բացություն, իրար հետ ակնհայտ կապ չունեցող երևույթները, տարրերը համադրելու կարողություն, ներքին հասունություն, ինքնադրսևորման ընդունակություն, քաջություն, անորոշության հանդեպ հանդուրժողականություն [4; էջ 262-265]:

Ա. Մասլոուն, խոսելով իր կողմից հետազոտվող ստեղծագործ անձանց մասին, օգտագործել է «բնական», «ինքնաբուխ», «էքսպրեսիվ», «ինքնավստահ», «բաց» հասկացությունները: Կ. Ռոջերսը ստեղծարար անձին վերագրում էր խնդիրների նոր լուծումներ գտնելու ունակությունը [2; էջ 157, 9]:

Ուսումնասիրելով գրականությունը, նկատում ենք, որ շատ հեղինակներ կարևորում են մանկությունը՝ որպես ստեղծարարության բուռն զարգացման շրջան, թեև ստեղծարարությունն ապահովող որակների պահպանման, զարգացման մեխանիզմների և ուղիների հարցը բավականաչափ ուսումնասիրված չէ:

Ըստ Ա. Մասլոուի՝ ստեղծագործությունը մանկության շրջանում հանդես է գալիս ամենաիրական, չաղավաղված տեսքով, քանի որ բխում է էությունից և չի ենթարկվում սոցիումի պահանջներին, սակայն ժամանակի ընթացում այն որոշակի նահանջ է ապրում տարաբնույթ գործոնների ազդեցության հետևանքով [9]:

Գիտնականների մեծ մասը անձի ստեղծարարության համար բեկումնային շրջան է համարում դպրոցական ուսուցման սկիզբը: Մասնավորապես Է. Ֆրոմմը, Կ. Ռոջերսը, Է. Նոյմանը Ա. Լոբոկը խոսել են այն մասին, որ դպրոցական ուսուցումը անձի ստեղծարարությանը լուրջ վնաս կարող է հասցնել, քանի որ հիմնականում դպրոցը սովորեցնում է պատրաստի գիտելիքներ, և երեխան կարող է ժամանակի ընթացքում կորցնել իրեն բնորոշ ստեղծագործական մտածելակերպը [1; էջ 65-66, 10]:

Հիմնվելով մեր կողմից ուսումնասիրված տեսությունների վրա՝ մենք ենթադրում ենք, որ կրտսեր դպրոցական տարիքը այն շրջանն է, երբ երեխայի ստեղծագործական ուժը գտնվում է ժամանակավոր «հանգստի» փուլում: Միաժամանակ մենք հակված ենք այն կարծիքին, որ անձի զարգացման միջավայրը և ազդեցության գործոնները կրտսեր դպրոցական տարիքում չեն հանգեցվում միայն ուսուցմանը: Անձը ավելին է, քան ուսումնական գործունեության սուբյեկտը, նա ավելի լայն է, զարգացման ավելի մեծ հնարավորություններով: Ուստի կարծում ենք, որ ապահովելով երեխաներին ստեղծագործական առումով բարենպաստ միջավայրով, համակարգված և նպատակաուղղված աշխատանքի շնորհիվ հնարավոր է որոշակիորեն կանխել ստեղծարարության հարաբերական անկումը:

Ստեղծարարության և ստեղծագործական ընդունակությունների զարգացման մեթոդները բազմազան են: Այնուամենայնիվ ժամանակաշրջանի պահանջներին համապատասխանող նոր զարգացնող ծրագրերի, հետաքրքիր մեթոդների ներմուծման կարիք մշտապես կա: Այսպիսի մեթոդներից է ավազանկարչությունը:

Ավազանկարչությունը ավազի միջոցով պատկերներ ստանալու յուրահատուկ և համեմատաբար երիտասարդ նկարչական մեթոդ է: Այն սկիզբ է առել 20-րդ դարի 70-ական թվականներին ամերիկացի անիմատոր Ք. Լիֆի կողմից: Ստեղծվելով որպես մուլտիպլիկացիայի և նկարչության մեթոդ՝ ավազանկարչությունը վերջին տասնամյակներում աննկատ չմնաց հոգեբանական գիտության ներկայացուցիչների, հատկապես զարգացնող աշխատանքով հետաքրքրված մասնագետների կողմից [5; էջ 68-69]:

Ավազանկարչության գործընթացը խիստ յուրահատուկ է: Որպես նկարչական «գործիքներ» հանդես են գալիս լուսային սեղանները, որոնք աշխատում են լույսի և ստվերի սկզբունքով, և հատուկ ավազը, որը ավազանկարչության մեթոդին հաղորդում է հատուկ նշանակություն:

Մենք ենթադրում ենք, որ ավազանկարչությունը որպես նկարչական մեթոդ իր յուրատիպությամբ, երեխայի համար նոր, անծանոթ և անորոշ լինելով արդեն իսկ կարող է զարկ տալ ստեղծարարությունն ապահովող որակների՝ յուրահատուկ մտածելակերպի, անորոշության հանդեպ հանդուրժողականության, զարմանալու կարողության, ինքնաբուխության, ինտուիցիայի և այլ որակների զարգացմանը, սակայն հարկ ենք համարում անդրադառնալ մեթոդի մի շարք կոնկրետ առանձնահատկությունների, որոնք թույլ են տալիս ենթադրել ստեղծարարության զարգացման գործընթացում մեթոդի նշանակալի դերի մասին:

Գլխավոր առանձնահատկություններից մեկը **ավազանկարի անվերջ զարգացումն ու դինամիկան** է: Ավազով նկարելիս հազվադեպ են ստացվում ստատիկ, կայուն պատկերներ. հիմնականում մեկ պատկերը «ծնունդ է տալիս» մեկ այլ գաղափարի, նկարողի միտքն անվերջ կարող է զարգանալ՝ ստեղծելով ամբողջական պատմություն՝ ստատիկ նկարի փոխարեն: Եվ այս ամենը անմիջականորեն կապված է ստեղծարարության կենտրոնական որակներից մեկի՝ երևակայության աշխատանքի հետ, ինչին անմիջապես նպաստում է մեթոդը [5; էջ 69-71]:

Վերոնշյալի հետ խիստ կապված մյուս առանձնահատկությունը **ստեղծագործական պրոցեսի, այլ ոչ թե արդյունքի վրա կենտրոնանալու հնարավորությունն** է: Բանն այն է, որ ի տարբերություն սովորական նկարչության, այս մեթոդի դեպքում հնարավոր չէ ստանալ մնայուն պատկեր. նկարները փոփոխվում են, յուրաքանչյուր նոր պատկեր ստանալու համար հարկավոր է սեղանի մակերևույթը նորից ծածկել ավազով: Սա աստիճանաբար սովորեցնում է նկարողին կենտրոնանալ բուն ստեղծագործական ընթացքի վրա, ինչը ևս ստեղծարարության կարևոր կողմերից է: Այս կապակցությամբ Ա. Մասլոուն նշել է, որ մենք մոլորության մեջ կընկնենք և կշեղվենք ստեղծագործության խորքային իմաստներից, եթե այն գնահատենք ստեղծագործության արդյունքի տեսանկյունից, և որ իրական ստեղծագործությունը հենց պրոցեսն է [9]:

Ավազանկարչության էական առանձնահատկություններից է նաև **պատկերից պատկեր փոխակերպումը, տրանսֆորմացիան:** Նկարչական պրոցեսի ընթացքում հնարավոր է փոխակերպել մի պատկերը մյուսի, նույնիսկ չհաջողված պատկերները ձևափոխել՝ ջնջելու փոխարեն: Նկարողը հնարավորություն ունի անվերջ նոր փորձեր կատարել պատկերի որոշակի տարրերը շտկելու ուղղությամբ՝ մի փոքր ավազ լցնելով իրեն չստացված թվացող հատվածների վրա: Սա կարող է ազդեցիկ փոխաբերություն (մետաֆոր) հանդիսանալ կյանքի տարբեր

իրավիճակներում թվացյալ փակուղիների հետ գործ ունենալիս կառուցողական ելքեր գտնելու համար, ինչը ուղղակիորեն կապված է ստեղծարարության որակներից ճկունության և սթրեսակայունության հետ [5; էջ 69-71]:

Անհրաժեշտ ենք համարում նշել նաև ավազանկարչության ևս մեկ նշանակալից առանձնահատկություն՝ **ոչ միայն դոմինանտ, այլև սուբդոմինանտ ձեռքով նկարելու հնարավորությունը:** Մարդկության ճնշող մեծամասնությունը կազմում են աջլիկները: Ինչպես հայտնի է, աջ կիսագունդը պատասխանատու է ստեղծագործական մտածողության համար, իսկ ձախ ձեռքը կառավարվում է աջ կիսագնդի կողմից: Կան հետազոտություններ, որոնք փաստում են, որ ինչպես կիսագնդերը կառավարում են ձեռքերի աշխատանքը, այնպես էլ ձեռքերի շարժողական ակտիվությունը հետադրաձ կապով խթանում է համապատասխան կիսագնդի աշխատունակությունը: Հետևաբար կարելի է ենթադրել ստեղծարարության հոգեֆիզիոլոգիական հիմքերի ակտիվացման ուղղությամբ ևս ավազանկարչության բարենպաստ ազդեցության մասին [3; էջ 43-46, 322-330]:

Եվ վերջապես հարկ է նշել, որ նկարչության այս տեսակը ի տարբերություն մյուսների թույլ է տալիս **անմիջական շոշափական կոնտակտի հետ գտնվել նկարչական նյութի (ավազի) հետ** և առանց միջնորդավարող գործիքների (մատիտ, վրձին, ներկեր և այլն) ստեղծել պատկերներ: Ավազի հետ շփումը դրական է անդրադառնում նյարդային համակարգի վրա. այն օժտված է հանգստացնող, ռելքասացիոն հատկություններով, թույլ է տալիս խաղաղվել, ազատվել անհանգստացնող մտքերից և կենտրոնանալ ստեղծագործական պրոցեսի վրա, ինչն իր հերթին զարկ է տալիս երևակայությանը: Կ. Յունգը նշել է, որ ավազով աշխատանքը թույլ է տալիս «արթնացնել» ներքին երեխային, որը բաց է, ազատ, անկաշկանդ և ստեղծագործ [6; էջ 172-174]:

Այսպիսով, մենք համարում ենք, որ ավազանկարչությունը կարող է բավարարել երեխայի ստեղծագործական ինքնարտահայտման պահանջմունքը, զարկ տալ երևակայությանը, նպաստել մտքի անվերջ հոսքին, խթանել որոշ անձնային որակների (ճկունության, սթրեսակայունության, ինքնաբուխության և այլն) զարգացումը, ինչը հիմնավորում է ոչ միայն նկարչարվեստի, այլև հոգեբանական գիտության ներկայացուցիչների կողմից տարեցտարի աճող հետաքրքրությունը այս նոր և յուրահատուկ մեթոդի նկատմամբ՝ միաժամանակ պայմանավորելով դրա տարածումը գրեթե ամբողջ աշխարհում:

Մենք ենթադրում ենք, որ ավազանկարչությունը այն մեթոդներից է, որը կարող է ստեղծագործական և անձնային զարգացման ճանապարհ հանդիսանալ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար՝ խթանելով ստեղծարարությունն ապահովող որակների զարգացումը և նպաստելով ստեղծագործական պոտենցիալի դրսևորմանը, ինչը միաժամանակ կարող է մեծ նշանակություն ունենալ անձնային զարգացման համար լայն իմաստով:

Գրականություն

1. **Խաչիբաբյան Ս.Ս.** «Ստեղծարարության զարգացման գործոնները կրտսեր դպրոցական տարիքում», Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), Եր.: «Ասողիկ» հրատ., 2016, 280 էջ, 61-68:
2. **Ильин Е.** Психология творчества, креативности, одаренности. : Питер; СПб.; 2009, 434 с., 156-200.
3. **Капаччионе Л.** Сила другой руки / М.: София, 2005. – 336 с. 38-62; 122-140; 322-335.

4. **Пономарев А.Я.** Психология Творчества. _ М.: «Наука», 1976, 304 с, 5-10; 262-288.
5. **Хачибабян С.С.** Особенности и роль рисования песком в развитии детского творчества>, Современные проблемы социально-гуманитарных наук (научно-теоретический журнал), №1(3), 2016, 173 стр; 68-72.
6. **Штейнхардт Л.** Юнгианская песочная психотерапия. – СПб.: Питер. _ 320 с; 68-80, 131-132, 169-187, 211-217.
7. **Юнг К.** - Собрание сочинений. Конфликты детской души/ Пер. с нем. - М.: Канон, 1997. - 336 с.185-209.
8. **Milner M.** On not being able to paint. – New York, Routledge, 2010. – 213 p, 149-158
9. **Маслоу А.** На подступах к психологии бытия. М.: «Рефл-бук», 1997, (эл. версия: http://noosphericlibr.ru/files/tomIII/maslow_toward_a_psychology_of_being.pdf)
10. **Нойманн Э., Юнг К.** Психоанализ и искусство (сборник статей), статья "Творческий человек и его трансформация". Рефл-бук, Ваклер, 1998 г., 304 с., (эл. версия: http://bookap.info/clasik/yung_psihoanaliz_i_iskusstvo/).

РОЛЬ РИСОВАНИЯ ПЕСКОМ В РАЗВИТИИ КРЕАТИВНОСТИ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

Хачибабян С.С. (ЕГУ, Ереван, Армения)
sosekhachibabyan@gmail.com

Ключевые слова: креативность, творчество, рисование песком, развитие, младший школьный возраст

Рисование песком является одним из современных направлений искусства. В статье раскрываются особенности, цели, возможности данного вида рисования как метода психологической работы, особенно подчеркивается его влияние на развитие креативности личности. Креативность рассматривается с точки зрения гуманистической психологии, анализируется вопрос относительного спада креативности на определенном возрастном этапе, и возможное преодоление этого периода при помощи рисования песком.

ROLE OF SAND DRAWING IN DEVELOPMENT OF CREATIVITY OF PRIMARY SCHOOLCHILDREN

Khachibabyan S.S. (YSU, Yerevan, Armenia)
sosekhachibabyan@gmail.com

Kew words: creativity, creation, sand drawing, development, primary school age

Sand drawing is one of the modern directions of art. The article reveals the peculiarities, goals and scope of the given type of drawing as a method for psychological work; in particular there is a highlight of its influence on development of personal creativity. Creativity is considered from the point of view of humanistic psychology. There is analyzed the issue of relative decline in creativity at a particular age and the possible overcome of such period by means of sand drawing.